ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

(Հ. Ս. Անասյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ հանրաճանաչված մատենագետի, պատմաբանի, ընդարձակուղի ու աղբյուրագետի ծննդյան 70 տարին։ Նրան լավ գիտեն ոչ միայն մեր հանրապետությունում, այլև վերջինիս սահմաններից դուրս ապրող հայագետները։

Հակոբ Սեդրակի Անասյանը ծնվել է 1904 թ. մայիսի 15-ին, Փոքր Ասիայի Էսկի-շեհիր քաղաքում, կուտինահայ ընտանիքում։ Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի Կուտինայում և Կ. Պոլսում։ Ուսումը շարունակելու համար 1919 թ. մեկնել է Վենետիկ։ Բարձրագույն կրթությունը (հայագիտական թեքումով) ձեռք է բերել Մխիթարյանների մոտ (Ս. Ղազար)։ Այնուհետև տեղափոխվել է Փարիզ, ուր առօրյա աշխատանքին զուգընթաց, զբաղվել է հայագիտական հետազոտություններով, հոդվածներ տպագրել սփյուռքի հայերեն պարբերականներում։

Փարիզում ապրած տարիներին Անասյանը բախտ է ունենում մոտիկից ծանոթանալու Արշակ Չոպանյանի և Ավետիք Իսահակյանի հետ։ Հայոց պատմության, հայ մատենագրության և գրականության իր հիմնավոր իմացությամբ, ինչպես նաև մայր հայրենիք մեկնելու մեծ փափագով, երիտասարդ հայագետը արժանանում է մեր մշակույթի երկու նշանավոր գործիչների ուշադրությանն ու բարյացակամ վերաբերմունքին, որոնց անմիջական աջակցությամբ էլ նրան հաջողվում է 1936 թ. ներգաղթել Սովետական Հայաստան։

1936—1942 թթ. Անասյանը աշխատել է Երևանի պետական համալսարանում. սկզբում որպես վերջինիս գրադարանի մատենագիտական բաժնի վարիչ, իսկ հետագայում որպես նույն համալսարանի պատմության ֆակուլտետին կից Ն. Մառի անվան կաբինետի գիտական աշխատող։

1941 թ. զորակոչվել է կարմիր բանակ։ Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին (ի դեպ, նրան շնորհվեց «Սովետական Միության զինված ուժերի 50 տարին» հոբելյանական մեդալ)։ 1947 թ. մինչև օրս աշխատում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում։

Հ. Ս. Անասյանի գրչին են պատկանում հայ միջնադարի սոցիալ-քաղաքական կյանքի և հոգևոր մշակույթի չլուսաբանված խնդիրներին նվիրված բազմաթիվ ինքնատիպ պատմա-բանասիրական հետազոտություններ, որոնք բարձր գնահատականի են արժանացել հայագետների շրջանում։

Այդ հետազոտություններից առաջին հերթին պետք է հիշատակել հեղինակի «17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում» (1961 թ.) գիրքը, ուր նոր և հարուստ նյութերի հիման վրա ցույց է տրված, որ տակավին XVII դ. 60-ական թվականներից արևմտահայության մեջ ազատագրական շարժում էր առաջ եկել Թուրքական տիրապետության դեմ՝ օրգանապես կապված հույների, ասորիների և Վրաստանի ժողովուրդների շարժումների հետ։

Նոր, անտիպ նյութերի հիման վրա կատարված մի ուրիշ արժեքավոր ուսումնասիրություն է հեղինակի՝ «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» (1969 թ.) աշխատությունը։ Իր այս գործով Հ. Ս. Անասյանը հաստատում է, որ մեզանում ցարդ միայն որպես առակագիր ու

քարոզիչ հայտնի Վարդան Այգեկցին եղել է նաև հայտնի հասարակական, քաղաքական ու մշակութային դեմք, կարևոր գործ է կատարել իր ապրած ժամանակաշրջանի հայ կյանքում։

Նմանօրինակ հետազոտություն է նաև Հ. Ս. Անասյանի «Հայ համաբարբառային գրականություններ և հայ մատենագրության համաբարբառ» (1972 թ.)։ Այս աշխատության մեջ առաջին անգամ մեզանում հանգամանալից քննության առարկա է դարձել համաբարբառների պատմությունը Հայաստանում V դ. մինչև մեր օրերը, առաջ է քաշված հայերեն կրոնական ու աշխարհիկ բնույթի համաբարբառների կարևոր դերի հարցը հայ քննական-հետազոտական մտքի զարգացման գործում, ինչպես և վեր է հանված այն միտքը, թե հայ մատենագրության ընդհանուր համաբարբառի ստեղծումը, որի համար ներկայումս աշխատանքներ են կատարվում Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի նախաձեռնությամբ, աղբյուրագիտական անգնահատելի նշանակություն ունի՝ նոր նյութեր և ուսումնասիրություններ, նոր ուղիներ ցույց տալով Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի, Եվրոպայի միջին-արևելյան մասի, Հարավային Ռուսաստանի և Կովկասի պատմության, առևտրական ու տնտեսական կյանքի մի շարք մութ կողմերի լուսաբանման համար։

Պատմա-բանասիրական կարևոր հետազոտություններ են Հ. Ս. Անասյանի՝ «Նպաստ մը հայոց ազատագրական պատմության» (1934 թ.), «Թուրքական տիրապետությունը Հայաստանում 18-րդ դարում» (1951 թ.), «Ռուզանդարանի ռուսերեն թարգմանությունը» (1954 թ.), «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» (1957 թ.), «Հովհաննես Կամենացու՝ Պատմություն պատերազմին Խոթինու» (1964 թ.) և այլն։

Հայագետի գլուխգործոցը, սակայն, նրա հրաշակավոր «Հայկական մատենագիտությունն» է, որն ինչպես ծավալով, այնպես էլ արժեքով առանձնակի տեղ ունի հեղինակի հայագիտական բոլոր գործերի շարքում (առաջին հատորը լույս է տեսել 1959 թ., երկրորդը՝ մամուլի տակ է և լույս կտեսնի ընթացիկ տարում։ Հիմնականում պատրաստ է նաև մյուս չորս հատորների նյութը, որոնք հաջորդաբար կտպագրվեն առաջիկա տարիների ընթացքում)։

Լայնորեն ծրագրված այս աշխատությունն իրականացնելու համար Հ. Ս. Անասյանը տասնյակ տարիների ընթացքում հետազոտել է հայ առաջին տպագիր գրքից (1512 թ.) մինչև մեր օրերը հրատարակված հայատառ բոլոր մատենագրական աղբյուրները, XIX—XX դդ. լույս տեսած քննական ուսումնասիրությունները, հայ և օտար պարբերականներ, Երևանի Մաշտոցյան Մատենադարանում և այլուր պահպանվող հազարավոր հայերեն ձեռագրերը և վերջիններիս հավաքածուների տպագրված ու անտիպ բոլոր ցուցակները։

Գիրքն ընդգրկում է V—XVIII դդ. հայոց պատմությունը, գրականությունը, փիլիսոփայությունը, քերականությունը, բնագիտությունը, բժշկությունը, իրավունքը և այլն, Մեսրոպ Մաշտոցից մինչև Սայաթ-Նովա։

«Հայկական մատենագիտության» մեջ ամփոփված են հայ ժողովրդի մշակույթի ու գիտության հուշարձանների ուսումնասիրության բնագավառում Հ. Ս. Անասյանի կատարած երկարամյա պատմա-բանասիրական պրպտումների արդյունքները։ Ելնելով մատենագիտության պահանջներից՝ հեղինակն այստեղ գիտականորեն բնութագրել ու գնահատել է այդ հուշարձանները (հոգևոր ու աշխարհիկ, ինքնուրույն ու թարգմանական), տվել դրանց բանասիրական ամփոփ վերլուծությունը աղբյուրագիտական և բնագրագիտական տեսանկյունից, նշել դրանց վերաբերյալ ինչպես առանձին գրքերով, այնպես էլ պարբերական մամուլում եղած բազմալեզու գրականությունը, դիրքորոշել բանասերներին՝ հայագիտության լուսաբանության կարոտ հարցերի ուղղությամբ։

Հարկ է հատուկ ընդգծել այն հանգամանքը, որ Հ. Անասյանը չի սահմանափակվել մատենագիտական վաստերի սոսկական արձանագրությամբ։ Իր նյութի նկատմամբ նա ցուցաբերել է ըստ ամենայնի քննական մոտեցում, մի դեպքում ընդունելով, մյուս դեպքում մերժելով այս կամ այն կարծիքը և փոխարինը առաջ քաշելով ու հաստատելով իր տեսակետը կամ վարկածը, երևան է հանել մինչև այժմ անհայտ մնացած շատ նոր նյութեր։

«Հայկական մատենագիտության» Ա հատորի մատենագիտական հոդվածներից այս առումով առանձնապես արժեքավոր են Անանիա Շիրակացուն, Ագաթանգեղոսին, Ամիրդովլաթին, Ազարիա Ջուղայեցիներին, Աղվանից պատմությանը, վարքաբանական գրականությանը, Անկանոն կամ անվավեր գրքերին նվիրված հոդվածները։

Անուրանալի է նաև հատորի ընդարձակ նեբածության արժեքը։ Այստեղ արծարծված և լուսաբանված են մատենագիտության համար ընդհանրապես և հայ մատենագիտության համար մասնավորապես էական նշանակություն ունեցող ժանրային, պատմական, մեթոդաբանական և տեսական մի շարք կարևոր հարցեր։

«Հայկական մատենագիտությունը» միայն հայագետների համար չէ, որ օգտակար է։ Այն արժեքավոր նյութեր է պարունակում նաև կով-

գասագետների, արևելագետների և պատմության ու բանասիրության խնդիրներով զբաղվողների համար առհասարակ, քանի որ հայ մատենագրությունը, ինչպես հայտնի է, քիչ տեղեկություններ չունի պահպանած Հայաստանի հարևան ու հեռավոր մի շարք երկրների ու ժողովուրդների կյանքի ու մշակույթի վերաբերյալ ևս։

Իր ընդգրկած հարուստ նյութով, այդ նյութի գիտական մշակման ու մատուցման բարձր մակարդակով Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտությունը» մի նոր ու աննախընթաց աստիճան է մատենագիտական ավանդույթներով հարուստ հայ դրականության մեջ։ Այդ են հաստատում այն ընդունելությունն ու գնահատականները, որին արժանացավ գիրքը ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

«Հայկական մատենագիտությունն» իրավացիորեն որակվեց իբրև «նշանակալից երևույթ և լուրջ ներդրում սովետական հայագիտության մեջ» (Հայաստանի ակադեմիայի պատմության ինստիտուտի հանձնարարականից), «Անփոխարինելի ձեռնարկ հայ միջնադարը հետազոտողի համար» («Известия» АН СССР, т. 19, 1961, стр. 540—542), «Մեծ կարևորություն ներկայացնող աշխատություն ոչ միայն հայագիտության, այլև միջազգային գիտության համար» («Вопросы истории», 1962, № 10), «Լայնորեն մտահղացված, սոլիդ և չափազանց կարևոր հրատարակություն» (ակադեմիկոս Ա. Գ. Շանիձե), «Խոշոր ներգրում արևելագիտության բնագավառում» (պրոֆ. Ս. Տեր-Ներսիսյան), «Իսկական մի գանձարան հայկական հին դրականությամբ ու պատմությամբ զբաղվողների համար» (պրոֆ. Ժերար Գարիտ) և այլն։

Հ. Ս. Անասյանի բոլոր աշխատություններում, մասնավորապես նրա կոթողային «Հայկական մատենագիտության» մեջ լավագույնս արտահայտված են հայագետի բնածին տաղանդը, բազմակողմանի իմացությունները, նրա ինքնաբուխ նվիրումը հարազատ ժողովրդի դարավոր կյանքի ու մշակույթի ուսումնասիրության շնորհակալ գործին, այդ կյանքի ու մշակույթի անկոխ ու դժվարամատույց ուղիներով քայլելու կամք ու պատրաստականություն, ինքնամոռաց աշխատասիրություն և օրինակելի կազմակերպվածություն. նաև՝ պահանջկոտություն իր հանդեպ, նորը ձեռք բերելու մշտական ձգտում, մըտածողության պարզություն, գրելաոճի հստակություն։

Հ. Անասյանի գործի բնութագիրը լրիվ չէր լինի, եթե մենք սահմանափակվեինք նրա գրած գրքերով միայն։ Վերջիններիս շնորհիվ տարիների ընթացքում արժանի հեղինակություն շահած գիտնականը խորհրդանիշ է հայոց պատմության ու մշակույթի յուրահատուկ կենդանի հանրագիտարանի։ Համապատասխան նյութեր ու ցուցումներ ստանալու համար նրան հաճախ են դիմում Երևանի Մաշտոցյան Մատենադարանի, ակադեմիայի պատմության, գրականության և մյուս ինստիտուտների, հանրային գրադարանի և հանրապետության գիտական ուրիշ օջախների երիտասարդ և տարեց հայագետները։ Նույն նըպատակով նրան իրենց նամակներն են հասցեագրում նաև արտասահմանի հայ և այլազգի գիտնականները։ Իր հասարակական պարտքը և աշխատանքի կարևոր օղակներից մեկը համարելով հիշյալ դիմումներին պատասխանելու գործը, Անասյանը իր սուղ ժամանակից չի զըլանում բաժին հատկացնելու նաև այդ գործին, աշխատելով բանիվ կամ գրչով գոհացում տալու իրեն դիմողներին։

Այսպիսին է ահա Հակոբ Անասյանը իր կենսագրության ու վաստակի բնութագրի հիմնական գծերով։ Հայագիտության անխոնջ նվիրյալին, նրա ծննդյան 70-ամյակի առթիվ, ցանկանք քաջառողջություն և հոգեկան կորով իր ստեղծագործական ծրագիր-մտահղացումները ժամանակին ու անխափան իրացնելու համար։

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ